

«ՄԽԻԹԱՐ ԳՈՇ» ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
АРМЯНСКО-РОССИЙСКИЙ МЕЖДУНАРОДНЫЙ УНИВЕРСИТЕТ "МХИТАР ГОШ"
"MKHITAR GOSH" ARMENIAN-RUSSIAN INTERNATIONAL UNIVERSITY

«ՄԽԻԹԱՐ ԳՈՇ»
ԳԻՏԱԿԱՆ ՀՈՐԴԱԾՆԵՐ

“МХИТАР ГОШ”
НАУЧНЫЕ СТАТЬИ

“MKHITAR GOSH”
SCIENTIFIC ARTICLES

2016, 2(45)

ՈՒՍՈՒՅՉԻ ԻԴԵԱՆ ԸՍՏ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ

ԼՈՒՍԻՆԵ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԵՊՅ մանկավարժության ամբիոնի ասիստենտ, մանկ. գիտ. թեկնածու



Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինը ոչ միայն աստվածընտրյալ հայրապետ էր, այլև խորաթափանց ու հեռատես քաղաքագետ, հմուտ հոգեբան, բարձրաճաշակ արվեստասեր, փիլիսոփա-գրականագետ:

Նա իր կերպարի մեջ կարողացավ հաշտեցնել իրարամերժ ժամանակներ՝ գործունեության բոլոր ձևերի մեջ թողնելով ճշմարիտ հայրենասիրության լուսե հետագիծ: Սակայն Վազգեն Վեհափառը նախևառաջ բացառիկ ուսուցիչ էր: Լուսավորչի գահի 130-րդ գահակալի մանկավարժական գործունեության թե՛ աշխարհիկ, թե՛ հոգևոր շրջանները հարուստ են ուսուցման և դաստիարակության մասին գաղափարներով ու մոտեցումներով: Վազգեն Առաջինի մանկավարժական դրսևորումների, դրանք ավետարանական մեկնություններով հարստացնելու և կիրառելու շնորհքի վառ ապացույցներն են նրա մանկավարժական գործունեության մասին վավերագրերը, հիշողությունները, միևնույն ժամանակ՝ իր գրչին պատկանող աշխատությունները, ուսումնասիրություններն ու հրապարակախոսական ելույթները: Նրա մտքերի դաստիարակչական ուժն ու հայրենասիրական շունչը դեռ երկար ժամանակ կփոխանցվի ապագա սերունդներին՝ որպես ճշմարիտ ներշնչանքի աղբյուր: Մեր հոդվածի շրջանակներում կփորձենք բացահայտել նրա մանկավարժական հայացքների վրա իրենց մեծ ազդեցությունը թողած ուսուցիչներին:

Վազգեն Առաջին Վեհափառի համար մանկավարժական իդեալի որոնումները սկսվել էին դեռևս երիտասարդության տարիներից: Դրանում իրենց տեղն ունեին մեր Մեծ ուսուցչապետեր Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևը:

Դեռևս երիտասարդ տարիներից Մեսրոպ Մաշտոցի կերպարը հատուկ նշանակություն է ունեցել սկսնակ ուսուցիչ Կարապետ Պալճյանի, հետագայում՝ Վազգեն Առաջին Վեհափառի համար: Ուսուցչի կերպարի իդեալական մանրակերտը կերտելիս Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինը մաշտոցյան գրերի 1500 ամյակին նվիրված իր կոնդակում պատգամում է լինել և մնալ ասիակ-մաշտոցյան դպրոցի արժանի հետնորդը, մայրենի լեզվի ու դպրության ջատագովը: Վազգեն Առաջինը նրանց դիմապատկերը գտնում է նաև «Միսաքյան-Քեսիմյան» ազգային վարժարանի իր ուսուցիչների, գործընկերների կերպարներում: Նրանցից շատերն այսօր մոռացված կլինեին, եթե պահպանված չլինեին Վեհափառի հուշագրություններն ու ելույթներում նրանց անվան հիշատակությունները, քանի որ հանգամանքների բերումով նրանց վերապահված էր ապրել սիբիրյան աքսորի, բռնության օրհասներ, չարժանանալ հայ քրիստոնյայի հոգեհանգստի ծեսին ու պատարագին: Նման նահատակների թվում էր նաև ապագա Վեհափառի՝ Կարապետ Պալճյանի գրականության ուսուցիչը՝ Գևորգ Բազարյանը, որի գրական բարձրաճաշակ պահանջկոտության տակ էլ ձևավորվել է Վեհափառի սերը հայ լեզվի և գրականության հանդեպ: Այս երևելի դաշնակցական գործիչը, որը Հ. Օհանջանյանի կառավարության մեջ կրթության նախարարի պաշտոն էր զբաղեցրել, մեծ դերակատարություն է ունեցել Հայաստանի առաջին Հանրապետության կրթական քաղաքականության մշակման գործում: Սակայն այդ տարիների նրա աշխատանքը ստվերում է մնացել, իսկ նրա գործունեությունը լուսաբանման է սպասում: Իր արտասահմանյան ուղևորություններից մեկի ընթացքում՝ Ֆերահյան երկրորդական վարժարանում տեղի սաների առջև ելույթի ժամանակ Ամենայն Հայոց Վեհափառ Վազգեն Առաջինը արցունքների միջից հուզմունքով վերականգնում է սիրելի ուսուցչի դիմապատկերը. «Այս պահուս,

այս Մեր հուզված վիճակը տեսնելով, կհիշենք պատկեր մը, որ հաճախ կկրկնվեր Ռումինիո մեջ, Պուլբրեշի հայոց վարժարանի հարկին տակ, կամ այլ հանդիսություններու առթիվ: Մենք շատ երիտասարդ էինք այն ատեն, հազիվ 19 տարեկան՝ ուսուցիչ և ուսանող միաժամանակ: Բայց անկե առաջ և հետո ալ, նման հանդիսությանց ամիսի վրա Պուլբրեշի հայոց վարժարանին ամենեւնի վաստակավոր ուսուցիչներեն՝ Գևորգյան ճեմարանի հոգևոր դասընթացը ավարտած, հայաստանցի սքանչելի մարդ մը՝ Գևորգ Ղազարյան, որ չապրիր հիմա, ամեն անգամ երբ ճառ կասեր, լացով կվերջացներ: Արտասուքով միշտ հայրենիքը հիշելով, էջմիածինը ոգեկոչելով, Հայաստանեն պատկեր մը, հուզում մը կփոխանցեր մեզի՝ երիտասարդներու: Մենք մեր կարգին կհուզվեինք անշուշտ, բայց շատ ալ չէինք հասկնար, թե մարդը ինչու կու լա Հայաստան ամուսնը հիշելով: Անշուշտ հետզհետե մենք այդ հասկացանք, բայց մենք այդ ամբողջապես հասկցանք այս պահուս, երբ ձեր առջև կգտնվինք» [6, էջ 176]:

Պալճյան-ուսուցչի մանկավարժական հայացքների վրա խոր հետք է թողել նաև գիտնական-հետազոտող պրոֆ. Գ. Սիրունին [3, էջ 33]: Քեմալական շարժման հետևանքով թողնելով Պոլիսը՝ Սիրունին 1922 թ. հայտնվում է Ռումինիայի հայկական գաղթօջախում: Երիտասարդներին միավորելու նրա նախաձեռնությունների հետևորդ է դառնում նաև Կ. Պալճյանը:

Խոսելով Սիրունու մասին՝ Վեհափառը ջերմությամբ է արձանագրում այն փաստը, որ նման պահանջկոտ ու հոգատար ուսուցչի ներկայությունը բացառիկ նշանակություն ուներ ոչ միայն իր սերնդակից երիտասարդների, այլև ուսուցիչների համար [7, էջ 257-258]: Գիտնական-մանկավարժի մասին խոսելով՝ Հայրապետը կարևորում է նրա հայրենասեր ու ազգամվեր գործունեությունը. «Նա չի դադարել գրելուց անգամ թուրքական բանտերում, 1915-18 թթ., նույնիսկ գաղթի ճանապարհին... Նա էր, ով Դանիել Վարուժանի հետ խմբագրել էր «Նավասարդ» տարեգիրքը: ...Սիրունու գործը արժանի է ամեն մի գովեստի».- գրում է նա՝ խոսքի շարունակության մեջ արժևորելով ու կարևորելով նման ուսուցչի ներկայությունը թե՛ մանկավարժների, թե՛ աշակերտների միջավայրում [4, էջ 1]: 1966 թ. Վազգեն Առաջինը Ս. Գրիգոր Լուսավորչի շքանշան է շնորհում բազմավաստակ պրոֆեսորին [2, էջ 5]:

Նկատելի է, որ Վեհափառի կողմից մանկավարժի նախընտրելի այս կերպարներն ունենին

հայրենասեր գիտնականի, հետազոտողի առանձնացող գծեր, մասնագիտության միջոցով հայրենիքին ծառայելու և նվիրաբերվելու բացառիկ ուղղվածություն: Մանկավարժին և գործվագուր ծնողին նախևառաջ գտնելով սիրելի մոր՝ Սիրանուշ Գալստյանի կերպարում, հայրենի հողուջրին միախառնվելու բախտին չարժանացած լուսահոգի ուսուցիչների, նաև իր կյանքում իմաստալից ճանապարհներ բացող և կաթողիկոսական տարիներին իր անփոխարինելի խորհրդատուն դարձած Գ. Սիրունու կերպարները նա ընդհանրացրեց և ուսուցչի իր իղեալի վերջնական հանգրվանը գտավ Ամենայն Հայոց Կաթողիկոս Սկրտիչ խրիմյանի կերպարում: Խրիմյան Հայրիկն առաջինն էր, որ զարգացնելով «ժառանգասիրաց» դպրոցներ ստեղծելու գաղափարը, բարձրացնում էր կրթության իրավունքների հարցը որպես համընդհանուր իրավունք: Վազգեն Վեհափառը բազմիցս է անդրադարձել խրիմյան Հայրիկի կերպարին նախևառաջ իբրև մանկավարժի: Երիտասարդ տարիներին գրած «Խրիմյան Հայրիկ որպես դաստիարակ» ուսումնասիրության մեջ նա հանգամանորեն է վերլուծում սիրելի կաթողիկոս-ուսուցչի մանկավարժական հայացքները, քանի որ համոզված էր, թե ամեն տարիքում էլ սովորողի վրա անցնչելի տպավորություններ կարող են թողնել այս մեծ ուսուցչի համոզմունքները, գիտելիքները, կարծիքն ու մոտեցումները տարբեր հարցերի շուրջ: Նա կարևորում է խրիմյան Հայրիկի այն միտքը, որ առանց խաղաղության և հայրենի երկրի վերաշինության, ինչպես նաև պանդուխտ հայերի վերադարձի, հնարավոր չէ պատկերացնել երկրի ապագան: Իսկ այս նպատակներին հասնելու համար հայրենաշեն ու հայրենասեր ուսուցիչներ են պետք: Խոսելով Սկրտիչ խրիմյանի մասին արդեն կաթողիկոսական բարձունքներից՝ Վեհափառը կոնդակ է հղում առաքելական եկեղեցիներին՝ նշելու մեծ հովվապետի ծննդյան 150-ամյակը, և հորդորում է քարոզներով բացահայտել ժողովրդի համար նրա հայրենասեր կերպարը. «Գրելու համար Հայրիկի մասին պետք է գրիչը թաթախել հայ ժողովրդի յոյզերու եւ երազանքներու աւազանին մեջ, զի Ս. Ս. Սկրտիչ խրիմյան Հայրապետը Համայն Հայութեան գիտակցութեան մեջ շատոնց ի վեր փառավորված է անթառամ լուսապսակով՝ իբրև անձնդիր քաջ հովվապետ, իբրև դաստիարակ հայ շինականի, իբրև նուագող հայոց դարավոր վշտի, իբրև ռահվիրայ հայրենյայց ազատութեան» [1, թղթ. 244]:

Վազգեն Առաջինը կարծում էր, որ մանկավարժներ են ոչ միայն դպրոցում դասավանդող ուսուցիչները, այլև Հայոց վեհափառները, նրանց կողքին նաև՝ Գյոթեն, Ռաբինդրանաթ Թագորը, Սբիրու Հարեթը և այլ գրողներ, ովքեր, Վեհափառի կարծիքով, դաստիարակում են հասարակությանը, կրթում իրենց արտահայտած մտքերի միջոցով:

Հայ մանկավարժության պատմության մեջ Հայրապետն առաջիններից է, որ հոգևորականի դերը նմանեցրեց սոցիալական մանկավարժի դերին՝ նկատելով, որ քահանան ուսուցանող է և դաստիարակ, սրբացնող է և մխիթարող, մեկ մտքով՝ բոլորի համար անխտիր՝ գթառատ հոգևոր հայր [5, էջ 89]:

Մեր օրերում ևս մանկավարժի մասին Վեհափառ Հայրապետի արժեքավոր դիտարկումներն ունեն իրենց նշանակությունն ու տեղը՝ որպես ուսումնասիրության հարուստ նյութ, նաև ոգեշնչման ու նոր բացահայտումների աղբյուր:

ԳՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Երևանի Մ. Մաշտոցի անվ. մատենադարան, թղթապանակ 244, վավերագիր թիվ 403/1:
2. Էջմիածին, 1966, ք. 9-10:
3. Էջմիածին, ԺԲ, 1970, դեկտեմբեր /Պրոֆ. Սիրունին որպես հայագիտության բազմավատակ երախտավոր, հոդվածագիր՝ Ս. Քուլանջյան:
4. Նաիրի, ք. 49, 10 մայիսի, Բեյրութ, 1970:
5. Վազգեն Ա Հայրապետ Հայոց Կենսագրություն, կոնդակներ, քարոզներ, էջմիածին, 1958, /Վեհափառ Հայրապետի հայրական հորդորները Անթիլիասի Դպրեվանքի ուսանողության/:
6. Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի ութերորդ ուղևորությունը, Մայր աթոռ Ս. Էջմիածին, 1969, /Ամենայն Հայոց վեհափառ հայրապետի ողջույնի խոսքը և պատգամը Ֆերահյան երկրորդական վարժարանում/ 20.05.1968, Էնսիմո/:
7. Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի իններորդ ուղևորությունը, էջմիածին, 1971:

ՈՒՍՈՒՑՅՈՒ ԻՊԵԱՆ ԸՍՏ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ

Լուսինե Հայրապետյան

ԵՊՀ մանկավարժության ամբիոնի ասիստենտ, մանկ. գիտ. թեկնածու

Ամփոփում

Վազգեն Առաջինը ոչ միայն Ամենայն Հայոց Կաթողիկոս էր, այլև ուսուցիչ, ում մանկավարժական գաղափարները կարևոր տեղ են զբաղեցնում հայ մանկավարժական մտքի պատմության մեջ: Դրանք հարուստ են ուսուցման և դաստիարակության մասին արդիական գաղափարներով ու մոտեցումներով: Հղվածումն ներկայացված են այն ուսուցիչների կերպարները, որոնք մեծ ազդեցություն են թողել Վազգեն Առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոսի մանկավարժական հայացքների ձևավորման վրա:

Բանալի բառեր. Ամենայն հայոց կաթողիկոս, մանկավարժական հայացք, մանկավարժական միտք, սոցիալական մանկավարժ, մանկավարժական կերպար, դաստիարակության սկզբունք, մեթոդ:

ИДЕАЛ УЧИТЕЛЯ СОГЛАСНО ВЗГЛЯДАМ ВАЗГЕНА ПЕРВОГО КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН

Лусине Айрапетян

Ассистент кафедры педагогики ЕГУ, канд. пед. наук

Резюме

Вазген Первый являлся не только Католиком Всех армян, но и учителем, педагогические взгляды которого занимали важное место в истории армяно-педагогических взглядов. Они богаты идеями и подходами, касающимися обучения и воспитания. В статье представлены образы тех учителей, которые оказали большое влияние на формирование педагогических взглядов Вазгена Первого Католика Всех армян.

Ключевые слова: Католикос Всех армян, педагогический взгляд, педагогическая мысль, социальный педагог, педагогический образ, принцип и метод воспитания.

THE TEACHER'S IDEAL ACCORDING TO VAZGEN I CATOLIKOS OF ALL ARMENIANS

*Lusine Hayrapetyan**Assistant YSU, Candidate of pedagogical sciences*

Summary

Vazgen I was not only Catolikos of All Armenians, he was also a teacher, whose pedagogical thoughts have had important part in Armenian pedagogical thought's history. They are full of ideas and approaching about teaching and education. In the article there are shown the teachers, who had a great influence on Vazgen I Catolikos's pedagogical views.

Keywords: Catolikos of all Armenians, pedagogical views, pedagogical thought, social pedagog, pedagogical image, educational principle, method.